ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝ 31.08.2023թ.

ՏՆՕՐԵՆ՝ /Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

<< Գյումրու թիվ 40 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ

2023-2024 ուստարի

Դաստիարակչական աշխատանքների պլանավորում

Տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ՝
/Նվարդ Մկրտչյան/

Ընդհանուր դրույթներ

1. Դաստիարակչական աշխատանքերն իրականացնելիս ապահովել.
   - Երեխայի արժանապատվության նկատմամբ հարգանքը՝ զուգակցված բարձր պահանջկոտության հետ.
   - Աշակերտների գործուն մասնակցությունը կրթադաստիարակչական գործընթացին.
   - Համապատասխանությունն աշակերտների տարիքային առանձնահատկություններին:
2. Արմատավորել ուսուցման աշակերտակենտրոն մեթոդներ, ընդլայնել դասի դաստիարակչական գործառույթը:
3. Զնավորել երեխաների ինքնաճանաչողությունը, ինքնուրույն գործելու, առողջ ապրելակերպի հմտություններ և պատասխանատու վարք:
4. Նպաստել երեխաների արժեքային համակարգի կազմավորմանը՝ հայրենասիրության, հումանիզմի, հանդուրժողականության հիմքերի վրա:
5. Երեխաներին հանդուրժողականության ոգով դաստիարակելու համար հնարավորություն ընձեռել ազատ՝ քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու և իրենց առջև ծառացած խնդիրների լուծման գործընթացին ակտիվորեն մասնակցելու համար:
6. Բարձրացնել և արդիականացնել մանկավարժների հոգեբանամանկավարժական պատրաստվածությունը:
7. Ստեղծել պայմաններ երեխաների անձնային զարգացմանը, ճանաչողական, գեղագիտական և հոգևոր պահանջմունքների բավարարմանը նպաստող կառույցների (արտադասարանական) բնականոն գործունեության համար:
8. Մշակել դաստիարակության ժամանակակից մեթոդներ, կրթական հաստատություններում դաստիարակության՝ որպես առաջնայնության նշանավորմանը, դրա դերի բարձրացմանը:
9. Աշխատանքներն ուղղել դաստիարակչական և ուսուցողական գործունեության միասնականացմանը (ինտեգրմանը):
10. Ապահովել ծնողների մասնակցությունը կրթական գործընթացի իրագործմանը (կրթության մասին օրենքի շրջանակներում):

11. Իրականացնել երեխաների մանկավարժահոգեբանական ծառայություն դաստիարակության գործում՝ օգնություն ընտանիքներին:
12. Մշակել դաստիարակության ոլորտի այնպիսի քաղաքականություն, որը սերնդի հոգին զերծ կպահի օտարամուտ, վնասակար աղանդներից:
13. Բարձր գնահատել Հայ Առաքելական եկեղեցու ավանդը մեր մշակույթի, պետականության, ժողովրդի բարոյահոգեբանական կերպարի ձևավորման և պահպանման գործում:
14. Գնահատել մշակութային արժեքները, իմանալ և հարգել ազգային, համամարդկային, մշակութային ավանդույթներն ու սովորույթները:
15. Ստեղծել ինքնակրթության և ինքնազարգացման համար անհրաժեշտ պայմաններ (համակարգչային ուսուցում և կիրառություն, ինտելեկտուալ խաղեր):
16. Նպաստել աշակերտների իրավունքների ու պարտականությունների լիարժեք գիտակցմանն ու իրացմանը:
17. Դաստիարակել երեխաներին՝ հարգանք ընտանիքի, դպրոցի, մեծահասակների, մայրենի լեզվի, ժողովրդական ավանդույթների, շրջակա միջավայրի նկատմամբ, դաստիարակել աշխատասիրություն, բարություն, ընկերասիրություն, գթասրտություն, հանդուրժողականություն:
18. Ապահովել անվտանգ ու ապահով պայմաններ, բժշկական օգնություն և սպասարկում, բժիշկ-հոգեբանների օժանդակություն:
19. Ձևավորել անձնական հիգիենայի և առողջ ապրելակերպի հմտություններ:
20. Ապահովել դպրոցի և ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը:
21. Օժանդակել աշակերտների վարքի, կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովմանը, աջակցել դպրոցական ինքնավարությանը և հասարակական վերահսկողությանը:
22. Իրականացնել ազգային, մշակութային ժառանգության պահպանման ու զարգացման ուղղությամբ միջոցառումներ:
23. Ամրապնդել ուսուցիչ-աշակերտ, աշակերտ- ծնող, աշակերտ- աշակերտ կապը, ծնող-դպրոց հարաբերությունները:
24. Ձևավորել գեղագիտական արժեքներ՝ գնահատելու գեղեցիկը, բարին, ճշմարիտը:
25. Ձևավորել հարգանք ՀՀ պետական խորհրդանիշերի նկատմամբ:

26. Ձևավորել բարոյահոգեբանական ժառանգությունը կրող, գործուն քաղաքացիական դիրքորոշում ունեցող (ռազմահայրենասիրական) անհատ և քաղաքացի:
27. Ստեղծել պայմաններ փոխադարձ հարգանքի՝ ուսուցումն ու դաստիարակությունն իրականացնող անձանց և երեխայի փոխհարաբերություններում:
28. Ամրապնդել ֆիզիկական դաստիարակության դերը աճող սերնդի առողջության ապահովման խնդրում:
29. Ձևավորել գիտելիքների, ունակությունների հիման վրա որոշակի գործունեության կամ առանձին գործողությունների կատարում:
30. Ապահովել կապը անչափահասների ոստիկանական տեսչության վարչության աշխատակիցների հետ:
31. Կազմակերպել տարբեր բնույթի դաստիարակչական աշխատանքներ՝ ներգրավելով ուսուցչի օգնականներին և դաստիարակչական աշխատանքների կազմակերպչին:
32. Մասնակցել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող /ներառական կրթական ծրագրի մեջ ընդգրկված/ աշակերտների անհատական ուսուցման պլան կազմելու գործընթացին՝ ըստ իրենց կարիքների:
33. Ստեղծել պայմաններ ներառական կրթական ծրագրի մեջ ընդգրկված աշակերտներին դասապրոցեսին ինտեգրելու և աշակերտների միջև փոխադարձ հարգանք ձևավորելու ուղղությամբ /ուսուցումն ու դաստիարակությունն իրականացնող անձանց և երեխայի փոխհարաբերություններում/:
34. Կազմակերպել առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար անհատական և առարկայական պարապմունքներ, ըստ ԱՈԻՊ-ի:

№	Աշխատանքի բովանդակությունը	Կատ. ժամկ.	Կատա-ղող	Պատաս-խան.
1	Վերահսկել առցանց համակարգի միջոցով ՀՀ պետական հանրակրթական դպրոցներում առաջին դասարանների ընդունելությունը և գրանցումը:	հունիս-օգոստոս	օպերատոր	տնօրեն
2	Կազմել դաստիարակչական աշխատանքների տարեկան պլան. • Կազմել դաստիարակչական աշխատանքների տարեկան անելիքները: • Կազմակերպել էքսկուրսիաներ Հայաստանի տեսարժան վայրերը տեսնելու համար: Այցելել կինո, թատրոն, տիկնիկային թատրոն, եկեղեցի, թանգարաններ:	ուստար-վա ընթաց-քում	դասղեկ-դասվարներ ԴԱԿ տն. ՄԿԱ գծով տեղակալ	տնօրեն
3	Դասղեկ-դասվարների սեմինար-խորհրդակ-ցություն (տարեկան անելիքների պլանա-վորում) • Անցկացնել դասղեկ-դասվարների խորհրդակցություններ (անհրաժեշտության դեպքում արտահերթ) լսել զեկուցումներ, քննարկել ուսումնադաստիարակչական հարցեր: • Դասղեկ-դասվարների խորհրդակցությունները դարձնել գործնական ու նպատակային: • Ստուգել դասղեկ-դասվարների թղթապանակները /դաստ. ծրագրերը, ծնողական ժող. պլանները, միջոցառումների կատարումը/:	յուր. ամսվա վերջին	տն. ՄԿԱ գծով տեղակալ դասղեկ-դասվարներ	տնօրեն տն. ՄԿԱ գծով տեղակ.
4	Առաջին դասարանցիների ընդունելություն. • <<Գիտելիքի օր>> տոնական միջոցառման կազմակերպում: • Դասասենյակների ձևավորում	սեպտեմ-բեր	ԴԱԿ դասվարներ	տն. ՄԿԱ գծով տեղակ.
5	Դասղեկ-դասվարների դաստիարակչական աշխատանքների պլանավորում, ծրագրերի կազմում, հաստատում: • Աշխատանքային պլանի հիմքում ամրագրել հետևյալ դրույթները. • Ստեղծել դասարանական ամուր կոլեկտիվ: • Աշակերտներին տալ հայեցի դաստիա-բակություն, նրանց մեջ արթնացնել ազգային արժանապատվություն և հպարտություն: • Հետևողական աշխատանքի միջոցով հնարավորինս նվազեցնել անհարգելի բացակայությունները: • Հետևողական աշխատանք տանել	սեպտեմ-բեր	տն. ՄԿԱ գծով տեղակալ դասղեկ-դասվարներ	տնօրեն

	աշակերտների գեղագիտական դաստիարակության գործի բարելավման ուղղությամբ:			
6	Դասարանական ժողովների անցկացում, ԾԽ-ի կազմի ձևավորում, նախագահի ընտրություն: • Հրավիրել ծնողական խորհրդի նիստեր, քննարկել դպրոցական խնդիրները և կազմակերպչական հարցերը: • Ընտրել դպրոցի <<Ծնողական խորհուրդ>>, կազմել գործողությունների տարեկան պլան: • Յուրաքանչյուր դասարանում ստեղծել դասարանական ծնողական խորհուրդ՝ 3-5 անդամ կազմով:	սեպտեմ-բեր	տն. ՄԿԱ գծով տեղակալ դասղեկ-դասվարներ	տնօրեն
7	Դասարանական ժողովների անցկացում, ԱԽ-ի կազմի ձևավորում, նախագահի ընտրություն: • Յուրաքանչյուր դասարանում ձևավորել դասարանական խորհուրդ 3-4 անդամ կազմով: • Անցկացնել աշակերտական խորհրդի նիստեր, ընտրել նախագահ, հետևել աշխատանքներին: • Ձևավորել աշխատանքային հանձնախմբեր	սեպտեմ-բեր	տն. ՄԿԱ գծով տեղակալ ԴԱԿ դասղեկ-դասվարներ	տնօրեն
8	Աշակերտների անկետաների ստեղծում . • Աշակերտների սոցիալ-կենցաղային պայմանների գնահատում (տվյալներ աշակերտների ընտանեկան վիճակի մասին): • Աշակերտների բժշկական ստուգումների արդյունքների ամփոփում:	սեպտեմ-բեր	տն. ՄԿԱ գծով տեղակալ ԴԱԿ դասղեկ-դասվարներ	տնօրեն
9	Ուսուցչական հերթապահության գրաֆիկի կազմում:	սեպտեմ-բեր	տն. ՄԿԱ գծով տեղակալ	տնօրեն
10	Դասղեկի ժամերի գրաֆիկի կազմում (շաբաթը 1 անգամ):	սեպտեմբեր	տն. ՄԿԱ գծով տեղակալ	տնօրեն
11	Հաճախակի ստուգումներ կատարել աշակերտների օրագրերի, գրենական պիտույքների, պայուսակների և այլ իրերի: • Կազմել տարբեր բնույթի դաստիարակչական աշխատանքներ, դասղեկների, ծնողների, աշակերտների հետ: • Ստուգել օրագրերի գրառումները, գնահատականներ, ծնողների և դասղեկների ստորագրությունները: • Հետևել ծնող-դպրոց կապին:	մշտա-պես	ԴԱԿ դասղեկ-դասվարներ	տն. ՄԿԱ գծով տեղակ.
	Ուշադրության կենտրոնում պահել հետ մնացող աշակերտներին:			

	Կամակերպել հետ մնացող աշակերտների հետ անհատական աշխատանք:			
12	Երկու ամիսը մեկ անգամ հրավիրել ծնողական ժողովներ, քննակել ուսումնադաստիարակչական խնդիրներ (1-9րդ դասարաններ):	2 ամիսը մեկ անգամ	դասղեկ-դասվարներ	տն. ՄԿԱ գծով տեղակ.
13	Դասղեկ-դասվարների դասալսումների ստուգում իրենց ղեկավարած դասարաններում ըստ նպատակի:	մշտա-պես	դասղեկ-դասվարներ	տն. ՄԿԱ գծով տեղակ.
14	Հաճախակի զրույցներ անցկացնել և՛ աշակերտների, և՛ ծնողների, և՛ ուսուցիչների հետ (ըստ առաջացած խնդիրների, ըստ կատարած աշխատանքների):	մշտա-պես	դասղեկ-դասվարներ	տն. ՄԿԱ գծով տեղակ.
15	Ապահովել աշակերտների կապը գրադարանի հետ: • Հնարավորության սահմաններում, օրենքով նախատեսված կարգով, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ապահովել անվճար դասագրքերով: • Համալրել գրադարանային ֆոնդը գեղարվեստական գրքերով: • Հաճախակի ստուգել դասագրքերի վիճակը (ըստ օգտագործման), անհրաժեշտության դեպքում հանձնարարել վերանորոգման և վերականգման աշխատանքներ:	մշտա-պես	դասղեկ-դասվարներ գրադարանա-վար ԴԱԿ	տն. ՄԿԱ գծով տեղակ.
16	Կազմակերպել շաբաթօրյակներ, հանրօգուտ աշխատանքներ (սեղան, աթոռների, գրադարանային գրքերի վերանորոգում):	ապրիլ	դասղեկ-դասվարներ գրադարանա-վար տնտեսվար ԴԱԿ	տն. ՄԿԱ գծով տեղակ.
17	Հետևել աշակերտների և մանկավարժների հաճախումներին, վերացնել ուշացումներն ու անհարգելի բացակայությունները: • Բարձրացնել սովորողների գիտակցական կարգապահությունը, վերացնել ուշացումներն ու անհարգելի բացակայությունները:	մշտա-պես	տն. ՄԿԱ գծով տեղակ. ԴԱԿ	տնօրեն
18	Մշտական կապ պահպանել անչափահասների բաժնի տեսչության հետ:	մշտա-պես	տն. ՄԿԱ գծով տեղակ.	տնօրեն
19	Անցկացնել. • մրցույթներ ուսումնադաստիարակչական որակի բարձրացման ուղղությամբ: • ուշադրության կենտրոնում պահել հայրենասիրական, գեղագիտական, բարոյական, սպորտային, քաղաքացիական միջոցառումների կատարումը:	ուստ. ընթացք.	տն. ՄԿԱ գծով տեղակ. տն. ուս. գծով տեղակ. դասղեկ-դասվարներ ԴԱԿ	տնօրեն

	Կազմակերպել այցելություններ զորամաս:			
20	Կազմակերպել հանդիպումներ նշանավոր մարդկանց հետ (հոգեբան, բժիշկ, եկեղեցական, նկարիչ):	ուստ. ընթացք.	դասղեկ-դասվարներ ԴԱԿ	տն. ՄԿԱ գծով տեղակ.
21	Կազմակերպել մասնագիտական կողմնորոշման հետ կապված այցելություններ, հանդիպումներ:	2-րդ կիսամյ.	դասղեկ-դասվարներ ԴԱԿ	տն. ՄԿԱ գծով տեղակ.
22	Խիստ ուշադրություն դարձնել աշակերտերի գրագետ խոսքին, վարքի կուլտուրային, վարվեցողության կանոններին:	մշտա-պես	դասղեկ-դասվարներ ԴԱԿ	տն. ՄԿԱ գծով տեղակ.
23	Կազմակերպել ձեռքի աշխատանքների ցուցահանդես տարբեր թեմաներով:	ուստ. ընթացք.	դասղեկ-դասվարներ տեխն. ուս. ԴԱԿ	տն. ՄԿԱ գծով տեղակ.
24	Կազմակերպել գրքի քննարկումներ դասղեկական ժամերին:	փետրվար	դասղեկ-դասվարներ ԴԱԿ	տն. ՄԿԱ գծով տեղակ. տն. ուս. գծով տեղակ.
25	Ուշադրության կենտրոնում պահել աշակերտների ինքնավարության խնդիրները:	մշտա-պես	տն. ՄԿԱ գծով տեղակ. ԴԱԿ ԱԽ	տն. ՄԿԱ գծով տեղակ.
26	Հաճախակի կազմակերպել դասալսումներ և՛ դասղեկական ժամերի, և՛ առարկայական (կատարել դասի դաստիարակչական կողմի վերլուծություն):	մշտա-պես	տն. ՄԿԱ գծով տեղակ.	տնօրեն
27	Համատեղ աշխատանք կազմակերպել դպրոցի ուսուցչի օգնականների և դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի հետ, կազմակերպել խմբային և անհատական պարապմունքներ՝ ըստ ԱՈՒՊ-ի, ներառական կրթական ծրագրի մեջ ընդգրկված երեխաների հետ:	մշտա-պես	ուս. օգնակ. դասղեկ-դասվար աջակց. թիմ	տնօրեն
28	Ձեռք բերել ուսումնական սարքավորումներ, քարտեզներ, գործիքներ, մարզական գույք, գեղարվեստական գրականություն, լաբորատոր սարքավորումներ: Հարստացնել ուսումնանյութական բազան:	ուստ. ընթացք.	տնօրեն տն. ՄԿԱ գծով տեղակ. գրադարան.	տնօրեն
29	Դասղեկի ժամերին անցկացնել զրույցներ, կարդալ զեկուցումներ. • Երեխաների իրավունքներն ու պարտականությունները	ուստ. ընթացք.	տն. ՄԿԱ գծով տեղակ. դասղեկ-դասվարներ	տն. ՄԿԱ գծով տեղակ.

	• Անվտանգ համացանց • Քաղաքացիական պաշտպանություն • Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի օգտագործման կանխարգելում դեռահասների շրջանում • Անչափահասների շրջանում իրավախախտումները կանխարգելելու վերաբերյալ միջոցառումներ • Աղետների ռիսկի նվազեցում • Առողջ ապրելակերպ • Իրավիճակային հարցեր		ԴԱԿ	
30	Կատարել դպրոցում անցկացվող դաստիարակչական միջոցառումների վերլուծություն, տեղ գտած թերությունների և կատարած առաջարկությունների հետագա բարելավման համար:	ուստ. ընթացք.	տն. ՄԿԱ գծով տեղակ. դասղեկ-դասվարներ ԴԱԿ	տնօրեն
31	Հետևել դասղեկների աշխատանքին, ուսման հանդեպ պատասխանատվության ձևավորման և ճանաչողական հակումների խթանման, քաղաքացիական դաստիարակության ամրապնդման գործում:	ուստ. ընթացք.	տն. ՄԿԱ գծով տեղակ.	տնօրեն
32	Համատեղ աշխատանք կազմակերպել դպրոցի ուսուցչի օգնականների, ԴԱ կազմակերպիչների, բուժքրոջ հետ, անցկացնել զրույցներ, լսել զեկուցումներ:	ուստ. ընթացք.	ուս. օգնական. ԴԱԿ բուժքույր	տն. ՄԿԱ գծով տեղակ.
33	Դասղեկական ժամերին ներառել թեմաներ, որոնք կնպաստեն աշակերտների առողջ ապրելակերպին և քաղաքացիական դաստիարակությանը /զրույցներ, քննարկումներ/: • Կատարել տարբեր բնույթի դաստիարակչական աշխատանքներ. • Սովորեցնել վարքի կառավարման անհրաժեշտ հմտություններ. • Կատարել հիգիենայի պահպանման. նշանակությունը կարևորող աշխատանքներ. • Կանխարգելել վատ սովորությունները. • Սերմանել սպորտի կարևորությունը սեփական առողջության համար. • Սեռային խնդիրների տարբերությունների ընկալում. • Բարեկիրթ վարքի դրսևորում.	ուստ. ընթացք.	տն. ՄԿԱ գծով տեղակ. դասղեկ-դասվարներ ԴԱԿ	տնօրեն
34	Բոլոր ծրագրերը նպատակաուղղել աշակերտների համակողմանի զարգացմանը, աշխարհայացքի ձևավորմանը, նախասիրությունների և ընդունակությունների բացահայտմանը:	մշտա-պես	տն. ՄԿԱ գծով տեղակ. տն. ուս. գծով տեղակ.	տնօրեն

35	Խրախուսել արտադպրոցական խմբակներ հաճախող երեխաներին, աջակցել նրանց թիվը մեծացնելու գործին. • Հաշվի առնելով աշակերտների նախասիրությունը՝ ընդգրկել արտադասարանական, արտադպրոցական խմբակներում:	մշտա-պես	տն. ՄԿԱ գծով տեղակ. ԴԱԿ	տնօրեն
36	Ստեղծել դաստիարակչական աշխատանքների մեթոդական անկյուն. • Շնորհալի աշակերտներին խրախուսելու անկյուն • Աշակերտական անկյուն • Ծնողական անկյուն • Շախմատային առաջընթացը գրանցելու անկյուն • Գերազանց աշակերտների ստենդ • Եկեղեցական 5 տաղավար տոների ստենդ • ՀՀ պետական խորհրդանիշների անկյուն • Անմահ զոհերի հիշատակի ստենդ/ հուշակոթող	ուստ. ընթացք.	տն. ՄԿԱ գծով տեղակ. ԴԱԿ	տնօրեն
37	Հայրենասիրական, ինտելեկտուալ ու գեղագիտական դաստիարակության ուղղությամբ կազմակերպել ցերեկույթներ, բանավեճեր ու հանդիպումներ. • ՈՒշադրության կենտրոնում պահել նշանավոր մարդկանց տարելիցները • Կազմակերպել միջոցառումներ, ցերեկույթներ, սեմինարներ, բաց դասեր:	ուստ. ընթացք.	տն. ՄԿԱ գծով տեղակ. ԴԱԿ	տն. ՄԿԱ գծով տեղակ.
38	Կազմակերպել դասղեկների դաստիարակչական աշխատանքների առաջավոր փորձի տարածում: • Շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի ժամ և այն ծառայեցնել երեխաների բազմակողմանի դաստիարակության և մանկական առողջ կոլեկտիվի ձևավորման նպատակին • Հետևողական աշխատանքի միջոցով հնարավորինս նվազեցնել անհարգելի բացակայությունները • Կիսամյակը 1-2 անգամ հրավիրել դասարանական ծնողական ժողով • Ամուր հիմքերի վրա դնել աշակերտ-դպրոց-ընտանիք կապը	մշտա-պես	տն. ՄԿԱ գծով տեղակ. ԴԱԿ	տնօրեն
39	Կազմակերպել միջդասարանական մրցույթներ. • ֆուտբոլ • շախմատ	ուստ. ընթացք.	տն. ՄԿԱ գծով տեղակ. դասղեկ-	տնօրեն

	• վոլեյբոլ • գնդի նետում • սպորտլանդիա • ինտելեկտուալ խաղային մրցույթներ • ընթերցանության և աամունքի մրցույթներ		դասվարներ ֆիզ. ուս. ԴԱԿ	
40	Կազմակերպել ռազմահայրենասիրական դաստիարակությանն ուղղված միջոցառումներ:	դեկտեմբ. մարտ	դասղեկ-դասվարներ զինղեկ	տն. ՄԿԱ գծով տեղակ.
41	Հետևողական աշխատանք տանել աշակերտների գեղագիտական դաստիարակության գործի բարելավման ուղղությամբ:	մշտա-պես	տն. ՄԿԱ գծով տեղակ. ԴԱԿ	տնօրեն
42	Ստուգել պարտադիր կրթության օրենքի սահմանադրական պահանջի կատարման վիճակը դպրոցում և արդյունքները քննարկել տնօրինության նիստում կամ մանկավարժական խորհրդում:	մշտա-պես	տն. ՄԿԱ գծով տեղակ. տն. ուս. գծով տեղակ.	տնօրեն
43	Ուսումնասիրել դասղեկների կատարած աշխատանքը: Արդյունքները քննարկել դասղեկների նիստերի ժամանակ:	ամիսը 1 անգամ	տն. ՄԿԱ գծով տեղակ. դասղեկ-դասվարներ	տն. ՄԿԱ գծով տեղակ.
44	Աշխատանք տանել դպրոցական գույքի, սարքավորումների, ուսումնական տեխնիկական միջոցների, դիդակտիկ պարագաների և այլ նյութերի օգտագործման և պահպանման ուղղությամբ:	մշտա-պես	տն. ՄԿԱ գծով տեղակ. տնտեսվար	տնօրեն
45	Ֆորս-մաժորային իրավիճակի դեպքում հեռավար կրթության կազմակերպում. • Հեռավար կրթության ուսուցման գործընթացը կազմակերպել հաստատության տնօրենի հաստատած ժամանակացույցին համապատասխան • Հեռավար կրթության մասնակիցներն են սովորողները, ուսուցիչները, մանկավարժական աշխատողները, ծնողները կամ սովորողի օրինական ներկայացուցիչը: • Հեռավար կրթական ծրագրերի բովանդակությունը չի կարող տարբերվել տվյալ առարկայի ծրագրով և չափորոշիչով սահմանվածից: • Հեռավար կրթությունը կազմակերպվում է ուսումնական պլանին և առարկայական ծրագրերին համապատասխան, որոնց պահանջները կատարած սովորողները	անհրաժ. դեպքում	տն. ՄԿԱ գծով տեղակ. տնտեսվար ԴԱԿ բուժքույր	տնօրեն

	գնահատվում են՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով: Գնահատականները անցկացվում են էլեկտրոնային մատյաններ: • Ապահովել յուրաքանչյուր աշակերտի համար կրթության կառավարման տեղեկատվական համակարգի հասանելիություն: • Հեռավար կրթության գործընթացից դուրս մնացած աշակերտների համար դասերի յուրացումը կատարել անհատական պարապմունքների միջոցով: • Հեռավար կրթության ընթացքում սովորողների ընդունելությունը, ինչպես նաև փոխադրումը, տեղափոխումը, ազատումը ուսումնական հաստատությունն իրականացնել առկա ուսուցման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:			